ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆՆԱ ԱՐՄԱՆԻ

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, մունիցիպալ, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2025

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ОГАННИСЯН АННА АРМАНОВНА

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ И МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫХ СТАНДАРТОВ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- Публичное право (конституционное, административное, муниципальное, европейское право, государственное управление)

ЕРЕВАН - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Եվրոպական համալսարանում

Գիտական ղեկավար *իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
Աշոտ Հայկի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ *իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
Լյուդմիլա Ասլանովնա Տխաբիսիմովա
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վահե Հովիկի Սայադյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ՆԳՆ կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի փետրվարի 12-ին՝ ժամը 16:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունվարի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, *իրավաբանական գիտությունների թեկնածու* **Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Европейском университете Армении.

Научный руководитель: *доктор юридических наук, профессор*
Ашот Гайкович Хачатрян

Официальные оппоненты: *доктор юридических наук, профессор*
Людмила Аслановна Тхабисимова
кандидат юридических наук, доцент
Ваге Овикович Саядян

Ведущая организация: **Образовательный комплекс МВД РА**

Защита состоится 12-ого февраля 2026 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке Государственного образовательного учреждения высшего профессионального образования «Российско-Армянского университета».

Автореферат разослан 10-ого января 2026 года.

Ученый секретарь специализированного совета, *кандидат юридических наук* **Дж.А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ներկա ժամանակաշրջանում ակնհայտ է, որ սահմանադրական իրավունքի և իրավունքի որևէ այլ ճյուղի, այդ թվում դրանց համակցության կամ իրավական կարգավորման հիմքում ընկած են ելակետային որոշակի գաղափարներ, որոնք համապատասխանում են պատմական կոնկրետ իրավիճակին և բխում են հասարակական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունից ու բովանդակությունից:

Ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների համար անմեղության կանխավարկածի որպես սահմանադրական սկզբունքի առանձնահատուկ արդիականությունը պայմանավորված է ոչ միայն տեսության և պրակտիկայի համադրման, այլև՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրական ապահովման ու արդյունավետ պաշտպանության երաշխավորման անհրաժեշտությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգում առանձնակի և կարևոր տեղ է զբաղեցնում անձի անմեղության կանխավարկածը՝ որպես իրավական համընդհանուր և ելակետային սկզբունք:

Իրավագիտության մեջ անմեղության կանխավարկածն առավելապես դիտարկվել է որպես քրեական դատավարության սկզբունք: Սակայն այդ կանխավարկածի և դրա դրսևորումների զարգացումները հատկապես իրավական համակարգերի արդիականացման պայմաններում ուղեկցվում են այն նշանակությամբ, որ անմեղության կանխավարկածը ոչ միայն մարդու և քաղաքացու հիմնարար իրավունք է, միաժամանակ սահմանադրական և միջազգային իրավունքի սկզբունք՝ պայմանավորված այն հիմնավորմամբ, որ այն ամրագրված է սահմանադրական ու միջազգային իրավական նորմերում, այլև՝ այդ սկզբունքն արդեն իսկ չի սահմանափակվում միայն քրեադատավարական հարաբերություններով:

Չնայած այն հանգամանքին, որ՝ ինչպես ատենախոսության շրջանակում հետազոտության առարկա միջազգային իրավական ակտերում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում անմեղության կանխավարկածը՝ որպես սահմանադրական սկզբունք, վերաբերում է քրեական դատավարությանը, այնուհանդերձ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն հարկ է ընկալել նաև որպես մարդու և քաղաքացու իրավունք և միաժամանակ այդ իրավունքի հետ համակցությամբ՝ այլ իրավունքների ու ազատությունների (մեղադրանքից պաշտպանվելու իրավունք, արդար դատաքննության իրավունք և այլն) իրական ապահովման ու արդյունավետ պաշտպանության երաշխիք:

Ուստի՝ ներկայացված հիմնավորումներով պայմանավորված անհրաժեշտ է նշել, որ անմեղության կանխավարկածի ամրապնդման ներկա վիճակը հնարավոր չէ համարել ավարտված: Ներկայումս այդ սկզբունքի հետ կապված առկա են բազմաթիվ վիճելի և խնդրահարույց հարցեր, որոնք առավելապես վերաբերում են

անմեղության կանխավարկածի իրավաընկալմանը, վերջինիս իրավական բովանդակությանն ու նշանակությանը, իրավական համակարգում դրա զբաղեցրած տեղին և տվյալ սկզբունքը չպահպանելու պարագայում այսպես կոչված «մեղավորության կանխավարկածի» հետևանքներին ու այլ հանգամանքների:

Վերոգրյալ հարցերի արդյունավետ և օբյեկտիվ լուծումը պահանջում է միջազգային և ներպետական օրենսդրության շրջանակում անմեղության կանխավարկածի և դրա կիրառման պրակտիկայի համակարգային և իրավական համեմատական ուսումնասիրություն:

Ելնելով հիշյալ հանգամանքներից՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական քաղաքականության ներկա փուլում արդիական ու հրատապ է դառնում քրեական դատավարությունից դուրս անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի հիմնախնդիրների հետազոտությունը հատկապես միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը ներկայացված հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Թեմայի գիտական հետազոտման և մշակվածության վիճակը. Հայրենական իրավագիտության մեջ անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի, ինչպես նաև մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման ու արդյունավետ պաշտպանության երաշխավորման դերի, նշանակության և բովանդակության հիմնահարցերը առանձին համալիր գիտական ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների և առանձին մենագրությունների շրջանակում[1]: Ինչ վերաբերում է անմեղության կանխավարկածին՝ որպես քրեադատավարական սկզբունք, ապա անհրաժեշտ է նկատել, որ բազմիցս ուսումնասիրվել է թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան իրավագետների կողմից:

Ատենախոսության մեջ հետազոտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք մեծամասամբ ներկայացվել են օտարերկրյա իրավաբան գիտնականների տարբեր աշխատություններում: Սույն ատենախոսության գիտական արժեքը կայանում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ փորձ է արվել համալիր կերպով ուսումնասիրելու անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները՝ հաշվի առնելով միջազգային փորձը, այդ թվում՝

---

[1]Մասնագիտական գրականության մեջ անմեղության կանխավարկածի վերաբերյալ քրեադատավարական նորմերի վերլուծության շրջանակում տեղ գտած առանձին ձևակերպումներ թեև կարող են նույնաբովանդակ լինել, սակայն սույն ատենախոսության մեջ անմեղության կանխավարկածի հիմնախնդիրները հետազոտման առարկա են դիտարկվել բացառապես ՀՀ Սահմանադրության և միաժամանակ դրանց հետ համակարգային առումով փոխկապվածության մեջ գտնվող Քրեական դատավարության օրենսգրքի նորմերի համալիր վերլուծության տեսանկյունից: Տե՛ս, մասնավորապես, Ղամբարյան Ա., Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, Երևան, 2005, Ղամբարյան Ա., Իրավական կանխավարկածները ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, 2019, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, Илюхина В.А. Принцип презумпции невиновности как одна из основ гражданского общества (на материалах российского и армянского права) // Гражданское общество в России и за рубежом. 2022. № 2.և այլն:

տարբեր երկրների սահմանադրական և օրենսդրական կարգավորումների համեմատական իրավական վերլուծության արդյունքները և միջազգային իրավական չափորոշիչների տեսական ու գործնական կարևորությունը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացման ուղղությամբ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ հետազոտության առարկա սկզբունքի գործնական զարգացումը շատ ավելի արագ է ընթանում, քան դրա օրենսդրական կարգավորումները, տեսական հիմնավորումներն ու ուսումնասիրությունները: Այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ առկա հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, ինչը և կանխորոշել է սույն ատենախոսության նպատակը, խնդիրներն ու մեթոդաբանական հիմքը:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների պաշտպանության և անմեղության կանխավարկածի սկզբունքի վերաբերյալ իրավագիտության մեջ առկա են զգալի թվով մենագրություններ, ատենախոսություններ, հետազոտություններ, ուսումնական ձեռնարկներ, ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակով գիտաժողովների նյութեր:

Հետազոտության օբյեկտը իրավական նորմերով կարգավորվող հասարակական այն հարաբերությունների ամբողջությունն է, որը զարգանում է Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի ամրագրման, իրականացման և պաշտպանության գործընթացում:

Հետազոտության առարկան կազմում են անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքին առնչվող հասարակական հարաբերությունները կարգավորող սահմանադրաիրավական նորմերը, արտասահմանյան երկրների օրենսդրությունը, միջազգային իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բարձրագույն դատական ատյանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան, ինչպես նաև անմեղության կանխավարկածի բնույթի և բովանդակության վերաբերյալ իրավագիտության մեջ շրջանառվող տեսակետներն ու հայեցակարգային բնույթի մոտեցումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակը միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով և ներպետական օրենսդրությունում միջազգային իրավական չափորոշիչներով պայմանավորված անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի ամրագրման, զարգացման հիմնական օրինաչափությունների բացահայտումն է և դրանց ազդեցության տեսագործնական հիմնախնդիրների գիտական ուսումնասիրության արդյունքում մարդու իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքների վերհանումը, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացմանն ուղղված իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ուղղությունների ու առկա կառուցակարգերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

ա) վեր հանել անմեղության կանխավարկածի որպես իրավական կանխավարկածի էության ու բովանդակության տեսական-իրավական առանձնահատկությունները,

բ) իրականացնել անմեղության կանխավարկածի իրավական ամրագրման, զարգացման և իրավական հիմքերի ձևավորման պատմահրավական վերլուծություն,

գ) իրականացնել անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի իրականացման ու պաշտպանության համեմատական իրավական հետազոտություն և վերլուծություն,

դ) առաջադրել անմեղության կանխավարկածի՝ որպես սահմանադրական սկզբունքի իրավաընկալման ժամանակակից սահմանում, որը կարտահայտի ոչ միայն այդ սկզբունքի գործառնական և կիրառական նշանակությունը, այլև համահունչ կլինի Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին,

ե) բացահայտել անմեղության կանխավարկածի ժամանակակից հիմնախնդիրները սահմանադրական կարգավորումների համատեքստում և սահմանադրական արդարադատության պրակտիկայում,

զ) կատարել անմեղության կանխավարկածի՝ որպես մարդու և քաղաքացու իրավունք և, միաժամանակ, այդ իրավունքի հետ համակցությամբ՝ այլ իրավունքների ու ազատությունների (մեղադրանքից պաշտպանվելու իրավունք, արդար դատաքննության իրավունք և այլն) իրական ապահովման ու արդյունավետ պաշտպանության համեմատական վերլուծություն,

է) բացահայտել անմեղության կանխավարկածի իրավական չափորոշիչները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի մեկնաբանությունների շրջանակում,

է) բացահայտել անմեղության կանխավարկածի միջազգային-իրավական չափորոշիչները և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրանց ներդաշնակեցմանն ուղղված հնարավորությունները,

ը) վեր հանել Հայաստանի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի սկզբունքի իրացման հետ կապված ներկայիս սահմանադրական քաղաքականության հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը. Հետազոտության շրջանակներում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներ են հանդիսացել համընդհանուր պատմական և տրամաբանական մեթոդները, ինչպես նաև համագիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը, դեդուկցիան և ինդուկցիան: Որպես հատուկ մեթոդներ՝ կիրառվել են համակարգային-կառուցվածքային և ձևական-իրավաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության ընթացքում նաև օգտագործվել են արտասահմանյան գիտական մշակույթին բնորոշ հետազոտության միջճյուղային, ինտեգրացվող և գլոբալիզացվող մոտեցումներով պայմանավորված հատուկ իրավական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ 1) համեմատական-իրավական մեթոդը, որով համադրվել

են անմեղության կանխավարկածի սկզբունքին առնչվող արտասահմանյան առանձին երկրներում սահմանադրական և օրենսդրական կարգավորումները, ինչի արդյունքում դուրս են բերվել այդ իրավունքի բնութագրման չափանիշներն ու զարգացման օրինաչափությունները, 2) պատմական-իրավական մեթոդը, որով հնարավոր է դարձել հետազոտել անմեղության կանխավարկածի սկզբունքի առանձնահատկությունը որոշակի պատմական ժամանակաշրջանում, վերլուծել դրա ձևավորման պատմական նախադրյալները և զարգացման հիմնական հեռանկարները:

Հետազոտության տեսական հիմքը. Ատենախոսության տեսական հիմքը կազմել են սահմանադրական իրավունքի, պետության և իրավունքի տեսության, միջազգային իրավունքի, քրեադատավարական իրավունքի, վարչական դատավարական իրավունքի, հարկային իրավունքի ոլորտներում անմեղության կանխավարկածի վերաբերյալ ընդհանուր գիտական և գիտամեթոդական աշխատությունները: Հետազոտությունը կատարելիս օգտագործվել են մի շարք հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են Դ.Ավետիսյանի, Ս.Ավետիսյանի, Վ.Կ. Բաբաևի, Գ. Բաղդասարյանի, Գ. Բարսեղյանի, Զեզարիա Բեքքարիայի, Ի.Բերիշանի, Տ.Բրեդովի, Օ.Վ. Գորոխովցևի, Ս.Գյուքոնի, Մ.Լ. Դավիդովայի, Ս.Դիլբանդյանի, Վ.Ա.Իլյուխինայի, Ա.Կարբալոնի, Մ.Խաչատրյանի, Ս.Ա. Մոսինի, Կ.Մուֆտարինի, Ա.Ղամբարյանի, Մ. Մաքյանի, Վ. Պողոսյանի և Ն. Սարգսյանի, Մ.Դ. Բայլեսի, Վ. Կրեյի, Թ. Բրեդովի և Լ. Ֆիշերի, Մ. Կատերինիի, Ք. Գրոփլի, Մ. Սպրաթի, Տ.Ն. Ռադկոյի, Վ.Ն. Կուդրյավցևի, Վ. Մալախովի, Զ.Ս. Կազումովի, Վ.Ա. Կուչինսկիի, Յու. Ա. Սերիկովի, Մ.Ս. Ստրոգովիչի, Վ.Ի. Ռադչենկոյի, Ի.Վ. Վոլկովայի, Գ. Քրիստոֆֆի, Լ.Ֆիշերի և այլոց աշխատությունները, ինչպես նաև մի շարք պաշտոնական կարծիքներ, ինչպիսիք են՝ Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների գործակալության՝ «Անմեղության կանխավարկածը և հարակից իրավունքները» մասնագիտական հեռանկարներ զեկույցը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության մասնագիտական զեկույցը կապված Բոսնիա և Հերցեգովինայում անմեղության կանխավարկածի կիրառման հետ և այլն:

Քաղաքացիական իրավունքում, վարչական իրավունքում և հարկային օրենսդրության մեջ անմեղության կանխավարկածի սկզբունքին անդրադարձել են այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Գ.Դանիելյանը, Ա.Խաչատրյանը, Ե.Ա. Նախովան, Յու. Ա. Սերիկովը, Տ. Ա. Գուսևան, Է.Ա. Խաբարովան և այլոք:

Այնուամենայնիվ, անմեղության կանխավարկածի սկզբունքին նվիրված գիտական աշխատությունների մեծ մասը բացահայտում է ուսումնասիրվող սկզբունքի միայն առանձին, ավելի հաճախ ոլորտային ասպեկտները: Քրեական դատավարությունից դուրս անմեղության կանխավարկածի և հատկապես անմեղության կանխավարկածի որպես սահմանադրական սկզբունքի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարվել են միայն վերջին տարիներին:

Հետազոտության նորմատիվ հիմքը. Աշխատության նորմատիվ հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, քրեական դատավարության օրենսգիրքը, արտասահմանյան երկրների

Սահմանադրությունները, այլ օրենքները, ինչպես նաև դատական պրակտիկան, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են անմեղության կանխավարկածի իրացմանը, պաշտպանությանը և կիրառմանը: Աշխատանքում հատուկ ուշադրություն է հատկացվել միջազգային իրավական ակտերի ուսումնասիրությանը, որոնց շարքում հատուկ տեղ են զբաղեցնում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը, Մարդու իրավունքների Եվրոպական Միության խարտիան, Եվրոպական միության Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի իրավական ակտերը և միջազգային իրավական այլ ակտերը:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները: Աշխատանքում առաջին անգամ անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը համալիր ուսումնասիրության առարկա է դիտարկվել՝ իր պատմական զարգացման համատեքստում և մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանության սահմանադրաիրավական կառուցակարգերի իրացման հիմնախնդիրների լույսի ներքո: Նաև, առաջին անգամ քննարկման առարկա է դարձվել անմեղության կանխավարկածի բովանդակային սահմանների հիմնահարցը, ինչպես նաև հիմնավորվել է այդ սահմանների սահմանափակ բնույթը: Աշխատանքի շրջանակներում բացահայտվել են անմեղության կանխավարկածի սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները՝ պայմանավորված տարբեր պատմական ժամանակահատվածներում դրա գործառութային դերակատարմամբ, հիմնավորվել են այդ սկզբունքի անմիջական գործողության և պաշտպանության հիմնական հնարավոր ուղղությունները:

Ատենախոսության մակարդակում քննարկվել են անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական ամրագրման հիմնախնդիրները միջազգային իրավական կարգավորումների շրջանակներում:

Արդյունքում՝ կատարվել են ոչ միայն տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են անմեղության կանխավարկածի ապահովման ու երաշխավորման սահմանադրական կառուցակարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկներ:

Ատենախոսությունում կատարված հետազոտության արդյունքներով պաշտպանության են ներկայացվում մի շարք եզրահանգումներ, տեսական հիմնադրույթներ և ընդհանրացված առաջարկություններ, որոնք, հանդիսանալով **գիտական նորույթ,** հանգում են հետևյալին.

1. Ատենախոսությունում համակարգված տեսքով ներկայացնելով իրավական կանխավարկածների իրավական բովանդակությունն ու նշանակությունը, հիմնավոր է համարվել այն եզրահանգումը, որ անմեղության կանխավարկածն իրավական կանխավարկածների համակարգում ապացուցողական և միաժամանակ հերքելի

այն կանխավարկածի տեսակն է, որն արտահայտում է անձի անմեղության վերաբերյալ ենթադրությունը, վարույթ իրականացնող մարմիններին պարտադրում է հակառակն ապացուցել, այսինքն՝ հերքել այդ ենթադրությունը՝ տրամադրելով անձի մեղավորության վերաբերյալ սպառիչ ապացույցներ, իսկ անմեղության տրամաբանությամբ պայմանավորված՝ վերջինս պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, հետևաբար նա անմեղ է, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

Աշխատանքում հիմնավորվել է նաև այն գաղափարը, որ անմեղության կանխավարկածի գործառնական նշանակությունը դրսևորվում է՝ ա) ապացուցման գործընթացի պարզեցման կամ հեշտացման, բ) մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ու արդարության պահպանման երաշխավորման, ինչպես նաև՝ գ) դատական գործընթացի արդյունավետության ապահովման գործառույթների օժտվածությամբ:

2. Բացահայտելով անմեղության կանխավարկածի՝ որպես սահմանադրական սկզբունքի բովանդակության հիմնահարցերը՝ առաջարկվել է անմեղության կանխավարկածի եզրույթի այնպիսի բնորոշում, համաձայն որի՝ այն ընկալվում է, մի կողմից՝ որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիք, իսկ մյուս կողմից՝ որպես անձի իրավական կարգավիճակի տարրերի համակցությամբ պայմանավորված սահմանադրաիրավական ինստիտուտ, որը բնութագրվում է ոչ միայն տեսական-իրավական ինքնատիպ բովանդակությամբ ու համընդհանուր նշանակությամբ, այլև դրսևորվում է մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների, պարտականությունների, արգելքների, սահմանափակումների և իրավական կարգավիճակի այլ տարրերի միջոցով:

3. Անդրադառնալով անմեղության կանխավարկածը բնութագրող՝ մեկը մյուսի հետ փոխկապակցված և մեկը մյուսին փոխլրացնող հատկանիշների իրավական բովանդակության բացահայտման կարևորությանը և դրանց փոխգործակցության հիմնախնդիրներին՝ աշխատանքում հիմնավորված են համարվում հետևյալ եզրահանգումները.

ա) որպես ընդհանուր իրավական բնութագրիչ՝ անմեղության կանխավարկածն ընկալվում է որպես մարդու և քաղաքացու իրավական վիճակ, երբ անձը կարող է հանցագործ ճանաչվել դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով միայն այն բանից հետո, երբ հանցանքի կատարման մեջ նրա մեղքը հաստատվի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, իսկ մինչ այդ մարդը համարվում է անմեղ, ինչը համարժեքորեն արտահայտում է հասարակության մեջ նրա վիճակը, նրա նկատմամբ այլ անձանց վերաբերմունքը,

բ) անձը մեղավոր է ճանաչվում օրենքով, հետևաբար՝ վարույթն իրականացնող մարմինն օրենքի հիման վրա պետք է հաստատի անձի մեղավորությունը,

գ) անմեղության կանխավարկածը կիրառվում է վարույթի ողջ ընթացքում՝ սկսած մինչդատական վարույթից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, ընդ որում՝ վարույթի ողջ ընթացքում այդ սկզբունքը դիտարկվում է որպես անձի մեղավորության վերաբերյալ անհատականացված կասկածի հետ կապված բոլոր ռիսկերի հակակշիռ,

դ) մինչև պատժի օրինական ուժի մեջ մտնելն անձի մեղավորության մասին կամ անմեղության կանխավարկածի գործողության ժամկետի կամ այդ կանխավարկածի հերքման պահի վերաբերյալ դատողություններն իրավական վերջնական նշանակություն չունեն,

ե) անմեղության կանխավարկածի սկզբունքը բացարձակ չէ, և վերջինիս տարրերը՝ մեղադրյալի լռելու իրավունքն իր դեմ չօգտագործելու, ապացուցման պարտականությունը մեղադրանքի կողմի վրա դնելու և միայն դատարանի մեղադրական դատավճռով անձի կողմից հանցանքի կատարումը հաստատելու սկզբունքները, կարող են սահմանափակվել՝ համապատասխան հիմքերի հիման վրա:

4. Ատենախոսությունում միանգամայն նորովի են ներկայացվել անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի հիմնախնդիրները և դրանց իրացման շրջանակները: Ըստ ատենախոսության՝ հիմնավորված է համարվում այն դիրքորոշումը, համաձայն որի՝ անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների համակարգում անհրաժեշտ է դիտարկել որպես առանցքային նշանակություն ունեցող իրավական այնպիսի գաղափար կամ իրավական պրակտիկայի ղեկավար սկզբունք, որի ապահովմամբ ու արդյունավետ երաշխավորմամբ է պայմանավորված, մի կողմից՝ անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, պահպանումն ու իրականացումը, մյուս կողմից՝ վերջինիս իրավական կարգավիճակի ապահովումը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ունի արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության, մեղադրանքից պաշտպանվելու և այլ իրավունքներ, եթե լիարժեքորեն ու ամբողջությամբ պահպանվում են նույն անմեղության կանխավարկածի պահանջները:

Միաժամանակ, հիմնավորվել է այն գաղափարը, որ անմեղության կանխավարկածը՝ որպես արդարադատության սահմանադրական սկզբունք, անհրաժեշտ է ընկալել որպես անձի օրինական անմեղությունը ենթադրելու վերաբերյալ հիմնարար և ներքին համոզմունք, որի նկատմամբ իրականացվում է համապատասխան վարույթ, և որի էությունը անձի բարեվարքության (բարեխղճության) վերաբերյալ ենթադրության մեջ է՝ հասարակության և պետության կողմից նրան համապատասխան վստահություն շնորհելու միջոցով, և արտահայտվում է տվյալ ենթադրությունը որպես ճշմարտություն ընդունելու նախնական պահանջով:

Այս հիմնավորմամբ կատարվել է հետևյալ եզրահանգումը. անմեղության կանխավարկածը ոչ թե սուբյեկտիվ կարծիքների համալիր է, այսինքն՝ մեղադրյալի մեղավորության վերաբերյալ ենթադրություն, այլ ա) օբյեկտիվ իրավական երևույթ, որի հիման վրա օրենքը մեղադրյալին անմեղ է համարում և պահանջում նույնը բոլոր մարմիններից, պաշտոնատար անձանցից և քաղաքացիներից, բ) իրավական ելակետային գաղափար, քանի որ դրանից է բխեցվում պետության վերաբերմունքը հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող (կասկածյալ) անձի նկատմամբ, որը համապատասխանում է ոչ միայն անմեղության կանխավարկածի սկզբունքի էությանը, այլև բխում է նույն սկզբունքի սահմանման տրամաբանությունից:

5. Ատենախոսությունում կարևորելով անմեղության կանխավարկածի իրավական ու գործառութային նշանակության միջազգային իրավական չափորոշիչների գիտագործնական հիմքերի վերլուծությունը՝ պաշտպանության են ներկայացվել մի շարք եզրահանգումներ, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը և դրա կարգավորումների հետ համակարգային առումով փոխկապակցված կոնվենցիոն այլ դրույթներ բովանդակում են նաև անմեղության կանխավարկածի երաշխավորման որոշակի պահանջներ, ինչպիսիք են՝ 1) պետությունները ստանձնում են պարտավորություններ՝ զերծ մնալու առանց մեղադրական դատավճիռ կայացնելու պատժամիջոցներ կիրառելուց, 2) կասկածյալի կամ մեղադրյալի լռելու իրավունքի առկայությունը ենթադրում է անմեղության կանխավարկածի երաշխավորման չափանիշ, 3) նույն հանցագործության համար և նույն հանցագործության համար նույն անձի նկատմամբ կրկնակի դատաքննության արգելքը՝ հաշվի առնելով, որ տվյալ արգելքն ազդում է նաև նրա հետապնդման վրա, 4) անմեղության կանխավարկածը ենթակա է պահպանման զանգվածային լրատվության միջոցների հետ շփվելիս:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի և դրա տարրերի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն են ընձեռել վեր հանելու անմեղության կանխավարկածի իրավական ապահովման այն երաշխիքների համալիրը, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին. ա) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ անմեղության կանխավարկածն ինքնին ընկալվում է որպես արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարր, բ) միաժամանակ, արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացման շրջանակում անմեղության կանխավարկածի երաշխավորման կարևոր պայման է դիտարկվում այն, որ քրեական գործերով ապացուցման բեռը դրված է մեղադրանքի կողմի վրա, գ) «in dubio pro reo» (կասկածի դեպքում՝ մեղադրյալի օգտին) սկզբունքի կիրառում, ինչը նշանակում է, որ մեղադրյալը վայելում է կասկածի առավելությունը, այսինքն՝ չփարատված կասկածները լուծվում են հօգուտ մեղադրյալի, դ) դատավորների կողմից կանխակալ կարծիքներ չունենալու պահանջ, ինչը, մասնավորապես, նշանակում է, որ դատարանին արգելված է դատաքննության ընթացքում բացահայտել իր կարծիքը կամ համոզմունքները մեղադրյալի դեմ առաջադրված փաստերի վերաբերյալ, ե) մեղադրողը պարտավոր է շարադրել այն փաստերը, որոնց հիման վրա մեղադրյալը մեղադրվում է, և ներկայացնել նրա մեղքը հաստատող բավարար ապացույցներ:

6. Ատենախոսությունում ընդհանրացնելով սահմանադրական կարգավորումների և դրանց հետ համակարգային փոխկապակցված քրեական դատավարության օրենսդրության դրույթների վերլուծության արդյունքները՝ Սահմանադրության 66-րդ հոդվածի կարգավորումների տրամաբանությունից բխեցվել են էական ու չափորոշիչային նշանակություն ունեցող այնպիսի կանոններ, որոնք դասակարգվել են անմեղության կանխավարկածը սահմանող սկզբունք-

կանոնների և այդ սկզբունքի կիրառմանը ներկայացվող սկզբունք-չափորոշիչների: Մասնավորապես, ատենախոսությամբ հիմնավորված է համարվել այն դիրքորոշումը, ըստ որի՝ **անմեղության կանխավարկածը սահմանող սկզբունք-կանոնն** անհրաժեշտ է բնութագրել որպես Սահմանադրությամբ սահմանված այն հիմնարար դրույթների կամ այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապվածության մեջ գտնվող օրենքի նորմերի համակցություն, որի հիման վրա ձևավորվում և բնութագրվում է անմեղության կանխավարկածը՝ որպես սահմանադրական սկզբունք և մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիք, իսկ **անմեղության կանխավարկածի կիրառմանը ներկայացվող սկզբունք-չափորոշիչն** անհրաժեշտ է ընկալել որպես սկզբունք-կանոնների հիման վրա սահմանված և կիրառմանը ներկայացվող պահանջների ամբողջություն, որոնք ուղղված են նույն անմեղության կանխավարկածի արդյունավետ իրացմանը:

Միաժամանակ, հետազոտության առարկայի տրամաբանության շրջանակում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի և անմեղության կանխավարկածի հետ համակարգային առումով փոխկապակցված սահմանադրական և քրեադատավարական այլ նորմերի համադրված վերլուծությունից հիմնավորվել է հետևյալ եզրահանգումը՝

1) որպես անմեղության կանխավարկածը սահմանող **սկզբունք-կանոններ** ատենախոսությամբ հիմնավորվել են հետևյալները. ա) անձի մեղավորությունը ճանաչվում է միայն դատարանի կողմից և որևէ այլ մարմին չունի այդ իրավասությունը, բ) յուրաքանչյուր անձ ունի անմեղ համարվելու իրավունք, գ) անձն անմեղ է որոշակի ժամանակի մեջ, այն է՝ քանի դեռ նրա մեղքն օրինական կարգով չի հաստատվել հրապարակային դատաքննության միջոցով՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, դ) մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք դատավարական գործընթացի սահմաններում և դրանից դուրս նրան տրված պաշտպանության բոլոր հնարավորությունների շրջանակում, ե) հանցագործության համար մեղադրվողը ճանաչվում է մեղավոր միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, զ) հանցագործության համար մեղադրվող անձի իրավունքների ու ազատությունների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակներին, է) մեղադրյալին մեղավոր ճանաչելու համար դատարանը ողջամիտ կասկածից դուրս պետք է համոզված լինի մեղադրյալի մեղավորության մեջ, իսկ որևէ ձևով կասկածի առկայության դեպքում այն պետք է մեկնաբանվի և լուծվի մեղադրյալի օգտին, ը) բոլոր դեպքերում մեղադրյալի մեղավորության վերաբերյալ կասկածների առկայությունը հանգեցնում է մեղադրյալի արդարացմանը, եթե սպառված են լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու հնարավոր այլ միջոցները, թ) մեղադրյալի մեղքն ապացուցելու պարտականությունն օրենքով սահմանված կարգով և պահանջներին համապատասխան դրված է մեղադրողի վրա, ժ) մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր մեղավորությունը:

2) որպես **անմեղության կանխավարկածի կիրառմանը ներկայացվող սկզբունք-չափորոշիչներ** դիտարկվել են հետևյալները. 1) անմեղության

կանխավարկածի գործողությունը տարածվում է քրեական դատավարության միակ մասնակցի՝ մեղադրյալի վրա, 2) դատարանի կողմից անձի մեղքը պետք է ապացուցված համարվի օրենքով սահմանված ընթացակարգով և օրենքի պահանջների լիարժեք պահպանմամբ, 3) անձի մեղավորությունը և դրա ապացուցված լինելը ձևակերպվում են միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, 4) անձին մեղավոր ճանաչելու համար նրա մեղքը պետք է ապացուցված լինի դատարանի կողմից, 5) դատավորն արդարադատություն իրականացնելիս չպետք է ելնի այն կանխավարկածից կամ համոզմունքից, որ մեղադրվողը կատարել է հանցագործություն, 6) անմեղության կանխավարկածի սկզբունքի պահանջների պահպանման և կատարման պարտականությունը վերապահված է ոչ միայն դատարանին, այլև քրեական վարույթ իրականացնող մարմնին, քննիչին, դատախազին, 7) անձն անմեղ է համարվում պետության կողմից, անգամ, եթե առկա են նրա կողմից հանցագործություն կատարելու կասկածներ կամ նրան մեղադրանք է առաջադրվել, 8) մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անձին անմեղ համարելը պայմանավորված չէ կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորության վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կարծիքից կամ ներքին համոզմունքից, 9) մեղադրյալին մեղավոր ճանաչելու վերաբերյալ բոլոր կասկածները կարող են վերաբերել ոչ միայն մեղադրանքի ողջ ծավալին, այլ նաև մեղադրանքի առանձին փուլերին, մեղքի ձևին, հանցագործությանը մասնակցության աստիճանին և բնույթին, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին, առանձին վերցրած ապացույցներին, 10) մեղադրանքը հիմնավորող փաստերի վերաբերյալ չփարատված կասկածների դեպքում՝ այդ փաստերը չեն համարվում որպես ապացույց, հետևաբար՝ չփարատված այդ կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի, 11) մեղադրանքը հերքող փաստերի վերաբերյալ չփարատված կասկածների դեպքում՝ այդ փաստերը շարունակում են դիտարկվել որպես ապացույց, մինչև այն պահը, քանի դեռ դրանք չեն հերքվել, 12) հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունը չի կարող հիմնվել միայն ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի հավաստի ապացույցների անհրաժեշտ ու բավարար համակցությամբ:

7. Ատենախոսությունում կարևորելով անմեղության կանխավարկածի էության և իրավական բովանդակության շրջանակներն ու խնդրահարույց ասպեկտները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում, ինչպես նաև դրանց հետ համակարգային առումով փոխկապացված քրեական դատավարության օրենսդրության դրույթների վերլուծության արդյունքները, հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի կարգավորումների բովանդակությունից անհրաժեշտ է նաև բխեցնել այն, որ՝

ա) մարդու և քաղաքացու արժանապատվության, անձնական ազատության, անմեղ համարվելու, արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների և դրանց հետ փոխկապակցված հիմնարար այլ իրավունքների արդյունավետ երաշխավորման ու իրականացման ապահովումը պահանջում է

պետությունից, այդ թվում իրավասու մարմիններից ու պաշտոնատար անձանցից, հարգել, պահպանել և պաշտպանել անմեղության կանխավարկածը՝ ինչպես սահմանադրական տվյալ սկզբունքի բովանդակային իմաստով, այնպես էլ դրա գործառնական նշանակությամբ,

բ) անմեղության կանխավարկածի ապահովումն ու երաշխավորումը պահանջում է զանգվածային լրատվության միջոցներից հարգել ու պահպանել մարդու և քաղաքացու անմեղության կանխավարկածի իրավունքը՝ ձեռնպահ մնալով անձի ենթադրյալ մեղավորության վերաբերյալ ցանկացած տեղեկությունների հրապարակայնացումից, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել դատարանի կողմից օրենքով սահմանված ընթացակարգով և օրենքի պահանջների պահպանմամբ,

գ) պետության նկատմամբ միջազգային իրավական պատասխանատվության միջոցների հնարավոր կիրառումը բացառելու, ինչպես նաև անմեղության կանխավարկածի սկզբունքի արդյունավետ երաշխավորելու և ապահովելու նպատակով պահանջվում է պետությունից պետական հանկադրանքի միջոցներ կիրառել իրավասու անձանց և զանգվածային լրատվության այն միջոցների նկատմամբ, որոնք որևէ ձևով խախտել են անմեղության կանխավարկածը և որոնց մեղավորությունը ապացուցվել է օրենքով սահմանված ընթացակարգով ու պահանջներով:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ անմեղության կանխավարկածի սահմանադրական կարգավորումների ոլորտում մշակվել են նոր գիտական առաջարկություններ և դիտարկումներ, որոնք հիմնված են եղել ոլորտի տեսական և գործնական բազայի ուսումնասիրության վրա:

Ատենախոսության մեջ բացահայտված հիմնահարցերի առնչությամբ կատարված վերլուծությունները, առաջարկություններն ու հիմնավորումները կարող են նպաստել հայրենական իրավական համակարգում անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման և կարգավորման հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում այդ սկզբունքի ապահովման երաշխիքների իրացման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել են այնպիսի առաջարկներ և դիտարկումներ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական և օրենսդրական կարգավորումների կատարելագործման ընթացքում:

Հեղինակի կողմից մշակվել են հստակ առաջարկներ, որոնք միտված են լուծելու անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի իրագործման և պաշտպանության ընթացքում առաջացած խնդիրները, մասնավորապես՝ ոլորտին առնչվող իրավական ակտերի ու համապատասխան դրույթների կատարելագործման մասով:

Հետազոտությունը կարող է օգտագործվել բակալավրի և մագիստրոսական մասնագիտացման ծրագրերի շրջանակներում՝ որպես դասավանդվող նյութ

այնպիսի առարկաների համար, ինչպիսիք են՝ «Սահմանադրական իրավունք», «Քրեական դատավարության իրավունք», «Համեմատական սահմանադրական իրավունք», «Վարչական դատավարության իրավունք», «Մարդու իրավունքներ», «Միջազգային իրավունք» դասընթացները, նաև՝ գիտական հետազոտություններում, ինչպես և՝ բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է անմեղության կանխավարկածի իրականացման ու պաշտպանության հիմնահարցերին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Հետազոտության հիմնական արդյունքները տեղ են գտել հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են համապատասխան գիտական հանդեսներում և մենագրության մեջ: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են նաև տարբեր գիտաժողովների, սեմինարների և առանձին քննարկումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Հետազոտությամբ առաջադրված խնդիրների համարժեք լուծման նկատառումներով պայմանավորված, ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ ու ամբողջականությամբ ներկայացնելու հետազոտության նյութը: Հիմք ընդունելով առաջադրված նպատակներն ու խնդիրները և հետազոտության տրամաբանությունը՝ ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, ութը ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացվել են հետազոտական թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության գիտագործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Անմեղության կանխավարկածն իրավական կանխավարկածների համակարգում. տեսական և պատմահրավական վերլուծություն»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Անմեղության կանխավարկածը որպես իրավական կանխավարկած. տեսական-իրավական վերլուծություն» 1-ին ենթագլխում հետազոտվել են անմեղության կանխավարկածի՝ որպես իրավական կանխավարկածի տեսական հիմնախնդիրները, մասնավորապես, ուսումնասիրության առարկա են դիտարկվել կանխավարկածների իրավական բնույթի ու նշանակության հիմնահարցերը, այնուհետև, դրանց համատեքստում բացահայտվել են անմեղության կանխավարկածի գործառնական նշանակությունն ու դրսևորվան առանձնահատկությունները:

«Անմեղության կանխավարկածի ձևավորման և զարգացման ակունքները. պատմահրավական վերլուծություն» 2-րդ ենթագլխում ուսումնասիրվել են անմեղության կանխավարկածի ձևավորման ու զարգացման հիմնահարցերը պատմական տարբեր ժամանակաշրջաններում, կատարվել է եզրահանգում, որ բոլոր ժամանակահատվածներում այն դրսևորվել է ընդհանրական հետևյալ նշանակությամբ,

որ այդ կանխավարկածի գործնական կիրառման պայմաններում երաշխավորվում է սխալ դատապարտումից անձանց պաշտպանության և իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքները վիճարկելու արդար հնարավորության ապահովումը:

«Անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական ամրագրման հիմնահարցերը և գործառութային նշանակությունը սահմանադրական քաղաքականության պայմաններում. միջազգային փորձը և համեմատական իրավական վերլուծություն» 3-րդ ենթագլխում հետազոտվել են արտասահմանյան տարբեր երկրներում անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման և գործառութային նշանակության ու կարևորության հիմնախնդիրները, անդրադարձ է կատարվել սահմանադրական կարգավորումների համակարգային և համեմատական վերլուծության հիմնահարցերին: Կատարված վերլուծությունների տրամաբանությունից բխեցվել է, որ դեռևս խոսք չի կարող լինել անմեղության կանխավարկածի սկզբունքի մեկ միասնական ընկալման մասին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Անմեղության կանխավարկածի ժամանակակից հիմնախնդիրները սահմանադրական կարգավորումների համատեքստում և սահմանադրական արդարադատության պրակտիկայում» 1-ին ենթագլխում քննարկվում են անմեղության կանխավարկածի հիմնահարցերը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ինչպես նաև անձի իրավական կարգավիճակի մյուս տարրերի համակցությամբ պայմանավորված սահմանադրական կարգավորումների համատեքստում և սահմանադրական արդարադատության պրակտիկայում:

«Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը. բնութագրիչները և գործառնական նշանակությունը սահմանադրաիրավական ժամանակակից կարգավորումների պայմաններում» 2-րդ ենթագլխում դիտարկվել են անմեղության կանխավարկածի որպես սահամադրական, այդ թվում՝ արդարադատության սահմանադրական սկզբունքի բնութագրիչները և կիրառական նշանակության հիմանհարցերը:

Միաժամանակ, անդրադարձ է կատարվել այն հիմնախնդրին, որ անմեղության կանխավարկածը պետք է ընկալել ոչ թե որպես սուբյեկտիվ կարծիքների համալիր, այսինքն՝ մեղադրյալի մեղավորության վերաբերյալ ենթադրություն, այլ օբյեկտիվ իրավական երևույթ, որի հիման վրա օրենքը մեղադրյալին անմեղ է համարում և պահանջում նույնը բոլոր մարմիններից, պաշտոնատար անձանցից և քաղաքացիներից:

«Անմեղության կանխավարկածի իրավական ապահովման հիմնահարցերը միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում» 3-րդ ենթագլխում ուսումնասիրվել են անմեղության կանխավարկածի իրավական ապահովման հիմնախնդիրները ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության ու փոխգործակցության շրջանակում: Այս առումով ուսումնասիրվել են անմեղության կանխավարկածի տարրերի ու ազգային սահմանադրական քաղաքականության դոկտրինի ձևավորման վրա առանցքային ազդեցություն ունեցող միջազգային իրավական չափորոշիչները, որոնց ընդհանրական նշանակաությունն ուղղված է

մարդու և քաղաքացու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը կոնկրետ այն ժամանակի մեջ, քանի դեռ անձի մեղքն օրինական կարգով չի հաստատվել հրապարակային դատաքննության միջոցով:

Ատենախոսության երրորդ՝ **«Անմեղության կանխավարկածի սահմանադրական մեկնաբանությունները և խնդրահարույց ասպեկտները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Անմեղության կանխավարկածը Սահմանադրության 66-րդ հոդվածի մեկնաբանությունների համատեքստում» 1-ին ենթագլխում դիտարկվել են անմեղության կանխավարկածի էության ու բովանդակային նշանակության բացահայտման առանցքային կառուցակարգերից մեկի հիմնախնդիրները՝ Սահմանադրության 66-րդ հոդվածի կարգավորումների մեկնաբանությունների համատեքստում: Բացի այդ, անմեղության կանխավարկածի էութան, բովանդակային նշանակության ու դրսևորման առանձնահատկությունների շրջանակում բացահայտվել են այն սկզբունք-կանոնները և սկզբունք-չափորոշիչները, որոնք բխում են սահմանադրական նորմերի բովանդակությունից և ուղղված են նույն անմեղության կանխավարկածի արդյունավետ իրացմանը:

«Անմեղության կանխավարկածի էության և իրավական բովանդակության շրջանակները և խնդրահարույց ասպեկտները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում» 2-րդ ենթագլխում անդրադառձ է կատարվել անմեղության կանխավարկածի բովանդակությանը և խնդրահարույց ասպեկտներին հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համակարգում:

Ատենախոսության եզրակացությունում արված եզրահանգումները հետևյալներն են.

1. Կանխավարկածն անհրաժեշտ է ընկալել որպես ցանկացած փաստի, իրադարձության, հանգամանքի առկայություն, քանի դեռ չի բացահայտվել կամ հայտնաբերվել դրա հակառակի առկայությունը, միաժամանակ, այն իրավաբանական տեխնիկայի միջոց է, որը կիրառվում է տարբեր շահերի (անձի, հասարակության կամ պետության) պաշտպանության նպատակով, և դրա միջոցով իրավական նորմերով ամրագրվում է հավանական ենթադրություն, որը համարվում է ճշմարիտ, քանի դեռ ապացուցված չեն դրանք հերքող փաստերը:

2. Ըստ էության ու բովանդակությամբ պայմանավորված տարբերակվում են երկու տեսակի կանխավարկածներ, դրանք են՝ ա) փաստական կանխավարկած, որն ինքնին իրավական նշանակություն չունի, քանի որ ամրագրված չէ իրավական ակտերում և չունի իրավական նորմերին բնորոշ պարտադիրություն, և որի պարագայում ենթադրյալ փաստի ճանաչումը պայմանավորված է իրավասու սուբյեկտի ողջախոհությամբ և մասնագիտական փորձով, բ) իրավական կանխավարկած՝ որպես ենթադրություն իրավական փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրված է օրենսդրական մակարդակում և պարտադիր է իրավակիրառողների համար, քանի դեռ չի հերքվել դրա ճշմարտացիությունը, ինչպես նաև որպես իրավական

եզրակացություն կամ ենթադրություն, որն իրավակիրառողը կատարում է գործով ներկայացված որոշակի փաստերի կամ ապացույցների հիման վրա:

3. Իրավական կանխավարկածները դատավարական գործընթացում հզոր և անհրաժեշտ գործիքներ են, որոնք անորոշության կամ ապացույցների անբավարարության հետ կապված խնդիրների լուծման հիմք են հանդիսանում: Թեև դրանք առավելապես նախատեսված են իրավական ակտերի (որոշումների) կայացմանն աջակցելու (օգնելու) համար, այնուամենայնիվ, իրավական կանխավարկածները պետք է զգուշորեն կիրառվեն, հատկապես, երբ խոսքը վերաբերում է անհերքելի ենթադրություններին (անհերքելի իրավական կանխավարկածներին), որոնք կարող են լրջորեն ազդել մարդու հիմնարար իրավունքների իրականացման և արդյունավետ պաշտպանության վրա:

4. Անմեղության կանխավարկածի՝ որպես հետազոտման առարկա սկզբունքի իրավական բովանդակության բաղադրիչի ակունքներն ունեցել են վաղ ժամանակների ծագում, և բոլոր ժամանակաշրջաններում այն դրսևորվել է ընդհանրական այնպիսի նշանակությամբ, համաձայն որի՝ այդ կանխավարկածի գործնական կիրառման պայմաններում երաշխավորվում է սխալ դատապարտումից անձանց պաշտպանության և իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքները վիճարկելու արդար հնարավորության ապահովումը:

5. Անմեղության կանխավարկածը սահմանադրահիրավական բացառիկ այն սկզբունքներից է, որն իր ամրագրումն է ստացել՝ ինչպես իրավական տարբեր համակարգերում և մոդելներում, այնպես էլ պետությունների սահմանադրական և դատավարական իրավունքների տարբեր համակարգերում հետևյալ ընդհանրական տրամաբանությամբ՝ հանցագործության կասկածանքով ձերբակալված անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, իսկ եթե դատարանում չի ապացուցվում անձի մեղավորությունը, ապա նա ազատ է արձակվում:

6. Եթե հաշվի առնենք այն, որ մեղավորության ապացուցման բեռն ընկած է մեղադրանքի կողմի վրա, ապա դա ենթադրում է, որ անմեղության կանխավարկածը պատմական բոլոր ժամանակաշրջաններում պետությունների և նրա մարմինների համար ծառայել է և ծառայում է որպես զսպող գործոն՝ կանխելով իշխանության չարաշահումները և ազատությունից ապօրինի զրկումները:

7. Անմեղության կանխավարկածը գտնվում է փոխադարձ կապի մեջ մեղադրյալի պաշտպանության իրավունքի հետ և մեղադրյալի պաշտպանության իրավունքի պահպանման և իրականացման կարևոր պայմաններից է անմեղության կանխավարկածի սկզբունքի ապահովումն ու երաշխավորումը, ինչը նշանակում է, որ մեղադրյալն ունի մեղադրանից պաշտպանվելու իրավունք, եթե լիարժեքորեն ու ամբողջությամբ պահպանվում են անմեղության կանխավարկածի պահանջները: Մի կողմից, յուրաքանչյուրի մեղքը անխուսափելիորեն պետք է ապացուցվի դատարանում, իսկ դա նշանակում է, որ այդ մեղադրանքը լիարժեք ու անվիճելիորեն պետք է հաստատվի դատարանում, իսկ մյուս կողմից, եթե դատարանը չի համաձայնվում այդպիսի մեղադրանքի հետ, ապա օրենքը թույլ չի տալիս դատարանի կողմից տվյալ անձին հանցագործ ճանաչել:

8. Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում բացարձակապես չի գործում անմեղության կանխավարկածի սկզբունքը, ավելին՝ տվյալ պետության իրավական համակարգում, որոշակի հանցագործությունների կապակցությամբ, ընդհակառակը, գործում է անձի մեղավորության կանխավարկածը:

9. Մուսուլմանական երկրների իրավական համակարգում անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառվում է ինքնատիպ եղանակով: Մասնավորապես՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության և ուսումնասիրված մյուս պետությունների, այստեղ անմեղության կանխավարկածի սկզբունքի կիրառությունը որոշակիորեն տարանջատված է, այսինքն՝ տարբեր կատեգորիաների անձանց նկատմամբ կիրառվում է տարբեր կերպ: Ասվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ մուսուլմանական պետություններում անձինք ենթարկվում են որոշակի դասակարգման և պայմանականորեն բաժանվում երեք կատեգորիաների: Ընդ որում՝ կոնկրետ արարքի կատարման մեջ առաջին կատեգորիային պատկանող անձանց մեղավորությունն ապացուցելու համար անհրաժեշտ են ավելի ծանրակշիռ փաստարկներ, քան մյուս երկու կատեգորիաներին պատկանող անձանց համար: Ավելին՝ ապացույցներ հավաքելու համար առաջին կատեգորիային պատկանող անձանց բանտարկելը ևս անթույլատրելի է: Գտնում ենք, որ մուսուլմանական երկրների կողմից որդեգրված նմանօրինակ մոտեցումը չի բխում օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքներից, հետևաբար և՝ չի կարող իրավաչափ համարվել:

10. Գործնականում գրեթե բոլոր մնացած պետություններում անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրված է միջազգային չափորոշիչներին համապատասխան: Տվյալ պետությունների որդեգրած քաղաքականությունն առավել մոտ է Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությանը: Մասնավորապես՝ ուսումնասիրված գրեթե բոլոր պետություններում անմեղության կանխավարկածն առաջին հերթին ամրագրված է սահմանադրություններով, իսկ Ֆրանսիայում՝ սահմանադրաիրավական նշանակություն ունեցող՝ Մարդու իրավունքների հռչակագրում: Այնուամենայնիվ, կան պետություններ, որոնց Սահմանադրությունները չեն ամրագրում անմեղության կանխավարկածի սկզբունքը, ինչպիսիք են՝ Իսպանիայի Թագավորությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, սակայն, միևնույն է, գործնականում այն հավասարապես և լիարժեքորեն կիրառվում և երաշխավորվում է: Սույն համատեքստում հարկ է նշել, որ թե՛ Իսպանիայի Թագավորությունը և թե՛ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը վավերացրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների Եվրոպական Միության խարտիան, որոնք երաշխավորում են անմեղության կանխավարկածի սկզբունքը: Հետևաբար՝ նույնիսկ ներպետական օրենսդրությամբ համապատասխան իրավակարգավորումների բացակայության պայմաններում, միևնույն է, տվյալ սկզբունքը ենթակա է կիրառման և երաշխավորման վերոգրյալ պետությունների կողմից, իսկ տվյալ պետությունների քաղաքացիներն իրենց համապատասխան իրավունքի պաշտպանության նպատակով կարող են դիմել ներպետական դատարաններ:

11. Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքի առկայության պայմաններում ապացուցման բեռի բաշխման հարցին, արձանագրվել է, որ ուսումնասիրված գրեթե բոլոր պետություններում անձի մեղավորությունն ապացուցելու բեռը դրված է մեղադրանքի կողմի վրա: Այնուամենայնիվ, ի տարբերություն օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետության կամ Իսպանիայի Թագավորության, որտեղ ապացուցման բեռն ընկած է մեղադրանքի կողմի վրա, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ապացուցման բեռն ընկած է նաև դատարանների վրա, քանի որ այստեղ դատարանները կաշկանդված չեն գործում առկա ապացույցներով և առաջնորդվում են ճշմարտությունը փնտրելու սկզբունքով՝ ելնելով դատավարության ընթացքում իրենց վերապահված՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքից:

12. Անմեղության կանխավարկածի սկզբունքը, ելնելով նաև դրա միջազգային ամրագրման փաստից, համընդհանուր իրավական սկզբունք է, որը գործում է ժամանակակից գրեթե բոլոր պետությունների իրավական համակարգերում: Ասվածը, ի թիվս այլնի, առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ պետությունները վավերացրել են միջազգային մի շարք այնպիսի կարևոր փաստաթղթեր, որոնք ամրագրում են անձի անմեղության կանխավարկածի իրավունքը՝ ստանձնելով տվյալ իրավունքն իրենց ներպետական օրենսդրությամբ սահմանելու և երաշխավորելու պարտավորություն:

13. Հանրային իրավական պատասխանատվության շրջանակներում (վարչական, հարկային և հանրային այլ իրավախախտումների համար) անմեղության կանխավարկածի կիրառման անհրաժեշտությունը բխում է բացառապես օրենսդրի կամքի արտահայտման արդյունքում ճյուղային օրենսդրական քաղաքականության բովանդակությունից՝ օրենսդրորեն սահմանել այդ սկզբունքի իրագործման ոլորտային առանձնահատկությունները:

14. Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը կարող է դիտարկվել որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիք և միաժամանակ անձի իրավական կարգավիճակի տարրերի համակցությամբ պայմանավորված սահմանադրաիրավական ինստիտուտ, որին բնորոշ է տեսական-իրավական ինքնատիպ բովանդակությունն ու համընդհանուր նշանակությունը, ինչպես նաև, որը դրսևորվում է մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների, պարտականութ յունների, արգելքների, սահմանափակումների և իրավական կարգավիճակի այլ տարրերի միջոցով:

15. Անմեղության կանխավարկածի սոցիալական դերն ու իրավաբանական նշանակությունը հասարակական կյանքում և սահմանադրաիրավական համակարգում պայմանավորված են այդ սկզբունքի Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսդրությամբ ուղղակի ամրագրման հանգամանքով, որն ուղղված է բացառապես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև հանիրավի մեղադրանքից անձի արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը,

16. Անմեղության կանխավարկածի վերաբերյալ միջազգային իրավական ժամանակակից հայեցակարգի ձևավորումն ուղղակիորեն առնչվում է անգլիական և ֆրանսիական իրավական մոդելների հետ, որտեղ անմեղության կանխավարկածը որպես իրավական կանխավարկած՝ իր ամրագրումն է ստացել Անգլիայի «Ազատությունների մեծ խարտիայում» (1215 թ.), իսկ օրենսդրական ընդհանուր ձևակերպումը՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին» ֆրանսիական հռչակագրում (1789 թ.):

17. ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի», Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի», Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների և միջազգային իրավական այլ ակտերի դրույթների վրա խարսխված անմեղության կանխավարկածի միջազգային իրավական հայեցակարգը, մի կողմից, յուրահատուկ նմուշային օրինակ է ազգային սահմանադրական և օրենսդրական քաղաքականության մշակման ու իրականացման համար, իսկ մյուս կողմից այն բովանդակում է այնպիսի իրավական չափորոշիչներ, որոնցից շեղումները միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման տեսանկյունից անթույլատրելի են, և որոնք պարտադիր են պետությունների համար:

18. Անմեղության կանխավարկածի տարրերի ու ազգային սահմանադրական քաղաքականության դոկտրինի ձևավորման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն միջազգային ակտերով ներդրված միջազգային իրավական չափորոշիչները: Անմեղության կանխավարկածի իրավական ապահովման ու երաշխավորման միջազգային իրավական չափորոշիչները, նախևառաջ, յուրաքանչյուր անձի անմեղության ու անմեղ համարվելու իրավունքի երաշխավորումն ու պահպանումն են, ինչպես նաև արդար դատաքննության ու դատական պաշտպանության իրավունքների ապահովումը և դրանցով պայմանավորված՝ մարդու իրավունքների հարգման սկզբունքները զարգացնող ու որոշակիացնող միջազգային իրավական պարտավորությունների ամբողջությունը: Այդ չափորոշիչների շրջանակում պետությունների ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման նպատակով վերջիններս իրենց վերապահված իրավասության սահմաններում սահմանում են այդպիսի իրավունքներ և երաշխավորում դրանց արդյունավետ պաշտպանությունը կոնկրետ այն ժամանակի մեջ՝ քանի դեռ անձի մեղքն օրինական կարգով չի հաստատվել հրապարակային դատաքննության միջոցով:

Սահմանադրական կարգավորումների շրջանակում անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրներին անդրադառնալիս, հեղինակը փորձ է արել առանձնացնել ոչ թե բոլոր վիճահարույց կամ լրացուցիչ վերլուծության ու ուսումնասիրության կարիք ունեցող հարցադրումները, այլ առավել արդիական ու հրատապ խնդիրները:

Կարծում ենք, որ դրանց վերաբերյալ սույն ատենախոսությունում արտացոլված եզրահանգումները պիտանի կլինեն նաև նույնաբնույթ այլ հիմնախնդիրների լուծման գործում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Հովհաննիսյան Ա., «Անմեղության կանխավարկածը որպես սահմանադրական սկզբունք (սահմանադրական և համեմատական իրավական հետազոտություն)», Մենագրություն, Երևան, 2025, 192 էջ:

2. Հովհաննիսյան Ա., Իրավական կանխավարկածի հասկացությունը և տեսակները, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, Տեղեկագիր 3(103) 2021, Երևան, էջեր 69-82:

3. Հովհաննիսյան Ա., Անմեղության կանխավարկածի տեղը և դերը սահմանադրական իրավունքի համակարգում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, Տեղեկագիր 2(106) 2022, Երևան, էջեր 112-119:

4.Հովհաննիսյան Ա., Անմեղության կանխավարկածի հիմնահարցերը միջազգային իրավական պրակտիկայում, «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, 13 (01), Երևան, 2022, էջեր 152-159:

5.Հովհաննիսյան Ա., Անմեղության կանխավարկածը ազգային-իրավական համակարգում. Իրավական ամրագրման միջազգային փորձը, «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», Երևան, 2023, համար 1, էջեր 26-44:

6. Հովհաննիսյան Ա., Անմեղության կանխավարկածի իրավական բովանդակությունը և խնդրահարույց ասպեկտները եվրոպական իրավունքում, «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», Երևան, 2024, համար 1, էջեր 44-60:

7.Հովհաննիսյան Ա., Անմեղության կանխավարկածի սկզբունքի ներդրման անհրաժեշտությունը վարչաիրավական հարաբերություններում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, Տեղեկագիր 1(118) 2025, Երևան, էջեր 132-143:

АННА ОГАННИСЯН

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ И МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫХ СТАНДАРТОВ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- Публичное право (конституционное, административное, муниципальное, европейское право, государственное управление)
Защита состоится 12-ого февраля 2026 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

РЕЗЮМЕ

Для государств с современной Конституцией особая актуальность презумпции невиновности обусловлена не только сочетанием теории и практики, но и необходимостью гарантировать реальное обеспечение и эффективную защиту прав и свобод человека и гражданина.

В юридической литературе презумпция невиновности в основном рассматривалась как принцип уголовного судопроизводства, однако развитие этой презумпции и ее проявлений, особенно в условиях модернизации правовых систем, сопровождается тем значением, что презумпция невиновности является не только фундаментальным правом человека и гражданина, в то же время принципом конституционного и международного права, обусловленным тем обоснованием, что она закреплена в конституционных и международно-правовых нормах, но и этот принцип уже не ограничивается только уголовно-процессуальными отношениями.

Научная ценность данной диссертации заключается в том, что в армянской юриспруденции была предпринята попытка комплексного изучения проблем конституционно-правового регулирования презумпции невиновности с учетом международного опыта, в том числе результаты сравнительного правового анализа конституционных

и законодательных норм разных стран, а также теоретическая и практическая важность международных правовых стандартов для модернизации правовой системы Республики Армения. В то же время необходимо отметить, что практическая разработка принципа, являющегося предметом исследования, идет намного быстрее, чем его законодательные положения, теоретические обоснования и исследования.

Это обстоятельство свидетельствует о том, что для решения существующей проблемы необходимы новые подходы, что и предопределило цель, задачи и методологическую основу настоящей диссертации.

Следовательно, в связи с представленными обоснованиями необходимо отметить, что нынешнее состояние укрепления презумпции невиновности нельзя считать завершенным. В настоящее время в связи с этим принципом существует множество спорных и проблемных вопросов, которые в основном касаются правового понимания презумпции невиновности, ее правового содержания и значения, места, которое она занимает в правовой системе, последствий так называемой «презумпции виновности» и других обстоятельств в случае несоблюдения данного принципа.

Эффективное и объективное решение вышеуказанных вопросов требует системного и правового сравнительного изучения презумпции невиновности и практики ее применения в рамках международного и внутригосударственного законодательства.

Исходя из вышеупомянутых обстоятельств, на нынешнем этапе конституционной политики Республики Армения исследование основных проблем конституционного принципа презумпции невиновности вне уголовного судопроизводства становится актуальным и актуальным, особенно в контексте международных правовых стандартов.

ANNA HOVHANNISYAN

THE PRESUMPTION OF INNOCENCE IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL NORMS AND INTERNATIONAL LEGAL STANDARDS

Competition for the degree of Candidate of Juridical sciences in the speciality of 12.00.02 – Public law. The defence of the dissertation is scheduled for 12th February 2026, at 16:00 in a panel session of the Professional council 063 of jurisprudence of Russian-Armenian University of the RA Higher Education and Science Committee (123, H. Emin, Yerevan 0051).

SUMMARY

For States with a modern Constitution, the special relevance of the presumption of innocence is due not only to a combination of theory and practice, but also to the need to guarantee the real provision and effective protection of human and civil rights and freedoms.

In the legal literature, the presumption of innocence was mainly considered as a principle of criminal proceedings, however, the development of this presumption and its manifestations, especially in the context of the modernization of legal systems, is accompanied by the importance that the presumption of innocence is not only a fundamental human and civil right, but at the same time a principle of constitutional and international law, conditioned by the fact that it It is enshrined in constitutional and international legal norms, but this principle is no longer limited only to criminal procedural relations.

The scientific value of this dissertation lies in the fact that Armenian jurisprudence has attempted to comprehensively study the problems of constitutional and legal regulation of the presumption of innocence, taking into account international experience, including the results of a comparative legal analysis of constitutional and legislative norms of different countries, as well as the theoretical and practical importance of international legal standards for the modernization of the legal system of

the Republic of Armenia. At the same time, it should be noted that the practical development of the principle, which is the subject of research, is much faster than its legislative provisions, theoretical justifications and research.

This circumstance indicates that new approaches are needed to solve the existing problem, which predetermined the purpose, objectives and methodological basis of this dissertation.

Therefore, in connection with the presented justifications, it should be noted that the current state of strengthening the presumption of innocence cannot be considered complete. Currently, there are many controversial and problematic issues related to this principle, which mainly relate to the legal understanding of the presumption of innocence, its legal content and meaning, the place it occupies in the legal system, the consequences of the so-called "presumption of guilt" and other circumstances in case of non-compliance with this principle.

An effective and objective solution to the above issues requires a systematic and legal comparative study of the presumption of innocence and the practice of its application within the framework of international and domestic legislation.

Based on the above-mentioned circumstances, at the current stage of the constitutional policy of the Republic of Armenia, the study of the main problems of the constitutional principle of the presumption of innocence outside criminal proceedings is becoming relevant and relevant, especially in the context of international legal standards.